



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Նոյեմբեր 16, 1988

Հոգեշնորհ  
Տ. Հայկազուն Վրդ. Մելգոնեան  
Հովի Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ  
Չելթընհամ.

Սիրելի Հայր Հայկազուն,


Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Հոկտեմբեր 12, 1988 թուակիր ձեր երկտողը, որով փափաք կը յայտնէք ունենալ Առաջնորդարանի գրադարանին մէջ տրամադրելի գիրքերու ցանկը:

Այս գրութեան հետ ձեզի կը դրկուի յիշեալ ցանկը: Բարի եղէք Եկեղեցոյդ գրադարանին համար անհրաժեշտ ընտրութիւնը ընել եւ տեղեկացնել Առաջնորդարան: Եթէ ձեր ընտրած գիրքերը տակաւին տրամադրելի ըլլան՝ կը դրկուին Եկեղեցոյ հասցէին, որպէս զի համայնքիդ գրադարանին միջոցաւ հաւատացեալները առիթը ունենան այդ գիրքերը կարդալու:

Աղօթակից

Հայկազուն Մ. Վրդ. Նաճարեան  
Առաջնորդի Փոխանորդ

Phone (215) 663-1600



## *HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH*

---

101 Ashmead Road, Cheltenham, Pa. 19012

Very Rev. Haigazoun Melkonian  
Pastor

October 12, 1988

Office of the Primate  
Diocese of the Armenian Church  
630 Second Avenue  
New York, New York 10016

ATT: Sylvia

Dear Sylvia:

Please be so kind as to send us a listing of the books mentioned on Directive No. 666 [enclosed]. Thank you.

Sincerely,

Very Rev. Haigazoun Melkonian  
Pastor

Enc.

**Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի**



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 666

Վիճակիս Հոգևոր Հովիմներուն

Եւ Ծխական Խորհուրդներու Ատենապետներուն

Նկատի ունենալով որ Առաջնորդարանի գրադարանին մէջ կարգ մը գիրքերու, ամսաթերթերու եւ հանդէսներու (գլխաւորաբար Հայերէն լեզուով) յաւելեալ եւ տրամադրելի օրինակներ կը գտնուին, պիտի ուզենք որ այս առիթէն օգտուին մեր թեմի այն համայնքները՝ որոնք գրադարան ունին եւ ընթերացանութեան համար գիրքեր կը տրամադրեն եկեղեցոյ անդամներուն:

Այն ծուխերը որոնք կը հետաքրքրուին այս տրամադրելի գիրքերով, կը խնդրենք որ անմիջապէս գրեն մեզի, շեշտելով որ իրենց եկեղեցին գործօն գրադարան մը ունի, որպէս զի գիրքերուն ցանկը դրկուի եւ անոր մէջէն կատարուի ընտրութիւնը:

Կրնայ պատահիլ որ կարգ մը գիրքերէ միայն քանի մը օրինակ տրամադրելի ըլլայ. այդ պարագային այդ գիրքերը ունենալու առիթը պիտի տրուի առաջին դիմում կատարողներուն:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Սեպտեմբեր 19, 1988

Նիւ Եորք, Ն.Ե.